

մաններու մէջ փակել և զշայաստան, շնորհակալութիւն գրուի ի-
րեն և ծանուցուի գեսպանաց թէ հաճոյ է և մեզ այս :

Յիրաւի գրուած և կնքուած էին դաշինք ի մէջ երկոցուն ժողո-
վըրդոցս, որ երբեմն իրարու հակառակորդ վիճողք էին ի վերայ ծո-
վու. ինչպէս յայտնի է՝ ի յերկար գրուածոց որ կը պահուին ի դիւա-
նըս Վենետիկոյ. ուր կան և պատճէնք թղթոց քահանայապետին առ
նոսա, առ Յովհաննէս անուանեալն բրինձ Անտիոքայ, առ Ասպետս,
և այլն. և անոնց յայտնի խորհուրդն արշաւելոյ յլղեքսանդրիա ի
1370. բայց այն գրութեանց մէջ Հայաստանի անուան յիշատակու-
թիւն չկայ, այլ միայն կիպրոսի. որով յայտնի կ'ըլլայ թէ ըստ գրու-
թեան ծերակուտին՝ այն ամենայն սահմանուած էր յառաջ քան ըզ-
դիմել գեսպանաց թագուհւոյ Հայոց՝ առ թագուհին ծովու:

Շարունակելի

ՈՒՐՈՒՍԳԻՄ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԹՔՈԴՈՍԻԱ-ԿԱՖԱ. ՔԱՂԱՔԻՆ ՏԱԿՐԻՈՑ

ԵՒ Ա.Ջ.ԳԻՄ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Ա. Ա. Ա. Ջ. Ա. Բ. Ա. Ն. ՈՒ Ի Թ Ւ Ի Ն

Բազմավիպիս նախընթաց պրակաց մէջ խօսելով, փոքր ի շատէ,
Անեցի Հայոց գէպ՝ ի Ռուսաստան գաղթելուն մասին, մասնաւորա-
պէս ի կամենից և ի Նոր-Նախիջևան¹, անհրաժեշտ հարկ մի էր
մեզ, խօսիլ օրագրիս էջերուն մէջ, ի Ցաւրիա կամ ի Ղրիմ, և ա-
ռանձինն ի թէոգոսիս գաղթող ազգայնոց մասին. վասն զի այս քա-
ղաքը, իւր աշխարհագրական դրիւք և շահավաճառութեան յարմար
ծովածոցով, սիրելովայր և կեդրոնատեղի եղած է Հայ գաղթակա-
նաց համար, և արդէն ի կամենից և ի Նոր Նախիջևան գաղթող Հայ-
կազունք ասոտի ի թէոգոսիոյ չուել զնացել են այն աշխարհները²:

Անհրաժեշտ հարկ զրուցեցի. վասն զի թէ ի կամենից և թէ Նախ-
իջևան անցողաբար և քիչ ժամանակ մնացեր եմ, մինչդեռ ի թէո-
գոսիս երկար միջոց բնակելով, և աչքի առաջ ունենալով ազգիս հին
և նոր յիշատակաց արժանի շինութիւնք՝ որք այս կողմերս, քաղքին
մէջ և դուրսը, ամէն քայլափոխի՝ հետաքննին աչաց առջւ կ'ելնեն,
ինչպէս հնաշէն և հոյակապ եկեղեցիք, ամրակուռ մատրունք, քաղ-

1. 1885 էջ 24... 1886 էջ 284...

2. Ի կամենից 1331ին, ի Նախիջևան 1778ին.

ցրահամ ջրոց աղբիւրք , քարակոփ խաչք և խաչքարինք հայ վերտառութեամբ . . . : Բաց յայսցանէ հմտալից հետազօտութիւնք բանիրուն մարդկանց զկազարաց աշխարհէ և առհասարակ զջաւրիոյ , յորս ազգիս գաղթականութեան մասին , նորանոր տեսութիւնք յերեան կ'ելնան , ի վաղուց ինձ գրգիռ կը լինէին , գրել և հաղորդել հեռաւոր ազգայնոց՝ Բազմավիպիս միջոցաւ , ի ժ դարէ և այսր Տաւրիացի Հայ գաղթականաց տիսուր և այլ երբեմն միսիթարական պատմութիւնը , մատնանիշ անելով նոցա յիշատակաց արժանի գործունէութիւնքը և աշխարհաշէն բարքը , որք յարակից են քաղաքիս անցելոյն հետ : Այլ որովհետեւ թէոդոսիոյ ապագայն երերուն դրութեան մէջ էր և նորա հզօր հարեանն և նախանձորդ Սկաստոպոլ՝ ամենայն միջոց ի գործ կը դնէր , զթէոդոսիանկուն դրից մէջ պահելով իւր վիճակը օր ըստ օրէ փառաւորելու , ահա այդ դըրութիւնը քաղաքիս՝ ինձ արգելք կը լինէր հրատարակելու քաղաքիս և ազգիս մասին հաւաքած տեղեկութիւնքս :

Այդ երերուն դրութիւնը , անշուշտ իւր վախճանը մօտեցած տեսնալով , անցեալ տարի (1890) գնալով զայրացաւ . գրեթէ համօրէն Ռուսաստան այդ խնդրով պարապեցան . ոչ թէ միայն Ղրիմեցի լրագիրք , այլ և մայրաքաղաքաց ծանրակշիռ թերթերը Պետրուրդի և Մոսկուայի՝ մի շարք երկար յօդուածոց նուիրեցին խնդրոյս : Ընթերցողք անտարակոյս կը հասկնան որ՝ առանձնական երկու քաղաքաց շահերը չէին որ կը խօսեցնէին մայրաքաղաքաց թերթերը , այլ ընդհանուր ազգային շահը : Թէոդոսիոյ կամ Սկաստոպոլի , այս երկու քաղաքաց միոյն նաւահանգիստը բաց պիտի լինէր վաճառաշահ նաւերու համար , հարաւային և միջին Ռուսաստանի բոլոր հումապրանքը պիտի իջնէր այն նաւահանգիստը և անտի պիտի անցնէր յեւրոպա , դիւրակենցաղ կենաց հազար ու մէկ տեսակ ապրանք եւ բոպայէ ի Ռուսաստան բերող նաւերուն միջոցիւ :

Սկաստոպոլ արդէն այդ առանձնանորհութիւնը կը վայելէր արևելեան երկրորդ պատերազմէն վերջը . ուստի քաղաքացիք ամենայն շանք և գործք ի կիր արկին այդ շահաւէտ առանձնաշնորհութիւնը ընդ միշտ իրենց քաղաքին սեփականելու :

ՍԵՒԱՍՏՈՊՈԼ Թէ ԹէՈԴՈՍԻԱ.

Վերնագրով երկայնաճառ յօդուածները պարզեցին խնդիրը , իւրաքանչիւր յօդուածագիր իւր մտաց համեմատ փաստեր ի մէջ բերելով : Սկաստոպոլցիք և նոցա հետ համաձայն այլ շատ նշանաւոր անձինք , որք բաց ի անձնական շահէ , բարոյապէս իրենք զիրենք պարտական կը ճանչնային Սկաստոպոլի շահը պաշտպանել , ձայն վերցուցին թէ « Սկաստոպոլ արժանաւոր է ամենայն առանձնաշընորհութեանց , նա Ա . արևելեան պատերազմին միջոց պատուար

կեցած է Ռուսաստանի, յինքն ընդունելով թշնամեաց բիւրաւոր ռումբերը, նորա ծովը և սարերը ներկուած են ազգին բիւրաւոր երիտասարդաց արիւնով. Սեաստոպովի շահը՝ բոլոր Ռուսաստանի շահըն է : Այս զօրաւոր ձայներու դիմաց, որք ընդարձակ աշխարհին մէջ ամէն կողմէ և ամէն անկիւնէ իրենց արձագանքը ստացան, աւելի զօրաւոր ձայն և փաստեր կարեոր էին ցուցանելու, որ առաջ արկեալ խնդրոյն թէոդոսիոյ նաւահանգիստը առաւել նպաստաւոր է : Սակայն այդ գործին ձեռնամուխ լինելու մեծ խոհեմութիւն և շրջահայեցութիւն կարեոր էին, միանգամայն աշխարհագրական և տնտեսական, նոյնպէս և պատմական հմտութիւնք, որպէս զի Սեաստոպովի շահը մէկդի թողլով, նշանակուի թէոդոսիոյ նաւահանգիստը առանձնաշնորհ վաճառաշահ ծոց Սև ծովու վերայ :

Եւ ահա այդ գործին ձեռք զարկաւ, և յաջողեցաւ հայկազն Լէոնիդ Մազիրեան, Տէրութեան խորհրդականը (Conseiller d'Etat), որ կաֆայեցի է ծննդեամբ, և քեռորդի միւս այլ պաշտպանին թէոդոսիոյ՝ գերահանճար ծովանկարչի Յովհաննու Այվազեան :

Սորա՝ Մազիրեանի գրածը, նախ իրեւ ծնունդ հայկական մոտաց և ապա իբրև խոհական և իմաստալից փաստաբանութիւն ներկայ խնդրոյս մասին, արժանի է օրագրիս հետագայ պրակաց մէջ ամբողջապէս հայ թարգմանութեամբ ի լոյս ընծայել :

Խոստացայ արդէն, քաղաքիս պատմութիւնը գրելու միջոց մատնանիշ անել ազգիս յիշատակի արժանաւոր անձինք և արարք՝ զըրուցեցի որ քաղաքիս պատմութեան հետ յարակից են և մերայնոց գործունէութիւնք : Վկայ խօսքերուս են արդէն, և ազգայնոցս տեղական գործունէութեան, անցեալ տարուան և ի մօտաւոր անցելում, աստ ի Ռուսաստան հանդիսացեալ նշանաւոր անձինք ազգիս ...

Նաւահանգստի խնդրոյ մասին կազմուած յանձնաժողովը (որ կարելի է զրուցել վայելապէս Վեհաժողով), զի կը նախադահէր ի ժողովին ինքնակալ կայսրն, անգամակցութեամբ թագաժառանգին, անդամ էր ժողովոյն և հայկազն նախարարն դելիսանով, ի նկատի ունենալով Պ. Մազիրեանի գրածը, բազմութեամբ քուէից որոշեց, նշանակել թէոդոսիոյ ծովածոցը բաց նաւահանգիստ վաճառաշահ ուուս և օտար նաւերու, Սեաստոպովինը՝ որոշելով լինել կայարան ուուս մարտիկ նաւերու . նորաշէն ծովաթումբերու և մեծամեծ ամբարանոցներու համար արքունի գանձարանէն վճարել միլիոնաւոր ըուրիշներու գումարը : Այս որոշողութիւնը եղաւ 1890 Մայիս 14ին . քիչ վերջը կայսերական հրովարտակը տպագրուեցաւ Ռուսաստանի բազմաթիւ թերթերուն մէջ, յորում բաց ի նաւահանգստին խնդրէն կը ծանուցուէր շուտով սկսելի երկաթուղոյ՝ մասին որ պիտի կակայ տարւոյս մէջ պիտի աւարտի :

4. Արդէն երկաթի ճանապարհի գործունէութիւնը սկսուած է, և ներկայ տարւոյս մէջ պիտի աւարտի :

պէ զթէոդոսիա բոլոր Ռուսաստանի հետ ի դիւրութիւն վաճառականութեամբ էնութեան։ Այսպէս ուրեմն, երբեմն գենուացւոց ժամանակ, հայութեամբ վաճառաշահն թէոդոսիա, դարձեալ քիչ տարիներու միջոց պիտի հասնի կոմ գերազանցէ ծովային Հայաստանու։ Այլ մեք փութամբ տալ մի ընդհանուր տեսութիւն թէոդոսիոյ ծովածոցին և այնոր ափերուն մօտ ազգիս անցելոյն։

¶

ԵՆԴՀԱՆՈՒԹ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Տաւրիական թերակղզւոյն արևելեան ծայրը, Սև ծովուն եղերք, շինուած է նախաքրիստոնեան հին քաղաքը թէոդոսիա. ի հարաւոյ, յելից և ի մտից արեու կը բարձրանան կաւեղէն բլուրներ, որոց վերին մասը լերկ, այլ ստորին մասը ծածկուած է քաղցրաճաշակ և գիներեր այգիներով։

Ծովը՝ յարևելից ման գալով, մտած է ցամաքին մէջ, մեր երկաթագիր (Ց տիւն) տառին վերին կիսաձեռվ, որ և ընդարձակ տարածութեամբ և խոր յատակաւն ապահով նաւահանգիստ է մեծամեծ նաւերու։ Քրիստոնեան թուականէն 600 տարի առաջ, նշանաւոր եղած է թէոդոսիա ծաղկեալ ծովային վաճառականութեամբ, այլ ի միջին դարս, փոխելով իւր անունը ի կաւա (կաֆա), ի ծայր փառաց հասած է գենուացի և Հայ վաճառականաց ձեռքով։ ի ժ դարէ և այսր յաճախած են Հայք այս վաճառաշահ նաւահանգիստը, որոյ վկայք են ցարդ մնացած քանդակագործ և այլ գրաւոր աւանդութիւնք։ Յառաջին կէս ԺԴ դարու, կէս միլիոն հայասեռ ժողովուրդ, և ըստ գրելոյ մի հայկական յիշատակարանի, « Խշանք և ազնուականք » բնակութիւն հաստատած են քաղաքիս մէջ, նոյնպէս և քաղաքէս գուրս՝ սարերուն վերայ ու հովտաց մէջ, տասը ժամուան ճանապարհ, ընդարձակ տարածութեան վերայ, ի թէոդոսիոյ մինչև յլլ. Խաչ, հայկական քաղաքը (առ գենուացւովք աղաւաղելով Սուրխաթ եղէլէ, այժմ Հին-Ղրիմ), և ի Ս. Խաչէ մինչև յղարապազար 65 վերստ հեռաւորութեան միջոց շինած են հարիւր հազար տուն, լեռները և սարերը զարդարել են խաչապսակ եկեղեցեօք և վանորէիւք եկեղեցեաց թիւը մինչև հազարի կը հասցնէ հին յիշատակարանը, « շինեցաք եկեղեցիս հազար » զրուցելով։ Այս թիւը, անշուշտ շատերուն, չափազանցօրէն զրուցուած կ'երեի, այլ մեք որ ականատես եղած եմք բաղմաթիւ կիսաւեր քարուկիր ազգային եկեղեցեաց, Ղրիմու սա-

1. Առ Գենուացւովք Armenia Marittima կոչուած է կաֆա։

ըերուն վերայ, այնպէս կը համարիմք, որ՝ եթէ ոչ հոյակապ եկեղեցեաց, այլ ամրակուռ և փոքրադիր մատրանց թիւը, կարի շատ եղածէ 1330—1475 թուականաց միջոց։ Այդ եկեղեցեաց մի մեծ մասը, բուն թէոդոսիոյ մէջ շինուած են, հնագոյնք՝ գենուացւոց պարսպին ներքնակողմը, նորաշնոր պարսպէն դուրս, հայկական պարսպին մէջ։ և այլ շատեր հայկական պարսպէն ևս գուրս մնացել են, Այսպէս մեծ եղածէ, Անեցի Ղրիմարնակ Հայ ժողովրդոց ժամասիրութեան և եկեղեցաշխնութեան եռանդը ժամանակաւ։ Շէն և պայծառ հնչած են այդ եկեղեցիք, յընթացս 145 տարիներու հայկական ժամասացութեամբ 1475 թուականին շատ պակսած է Հոյոց թիւը, որով և եկեղեցեաց մի մասը, անծուխ և աւերակ մնացել են, այլ վերջին գաղթականութիւն ազգիս (1778) ի Ցաւրիոյ յիշատերինեսլաւ, Դոնեան աշխարհքը, բոլորովին անմարդի և անհայ թողած է, երբեմն հայութեամբ հոյակապն կաֆա, որով և եկեղեցիք դարձել են բոյն ջըղկանց և բուէնից։

Սակայն աւերակն ևս կաֆա, միշտ սիրային անկիւն մի գրաւած է հայ անեցի գաղթականաց սրտերուն մէջ, և մինչև ցայսօր քաղցրացուր կը հնչէ այն անունը հայ ականչաց։ Անցեալ գարու մի հայ գրիչ պանծանօք կը գրէ.

« Կաֆա քաղաք ծովահայեաց, եկեղեցիքը զարդարուած ».

Արդեօք ազգիս կրած բազմապատիկ վիշտերն են, այս քաղաքիս մէջ այդ սիրոյ զգացման շարժառիթը, թէ բիւրաւոր նահատակաց արեան գետերը, որք ողողած են քաղաքիս հողն և գետին։

Որդէս և իցէ թէոդոսիա քաղաքը յընթացս հարիւրաւոր տարիներու, բիւրաւոր ալգայնոց գործունէութեան ասպարէզ եղած է, և կ'արժէ ազգայնոց այս քաղաքին հին և նոր պատմութեան¹ ծանօթ լինել։

Հ. ԳԵՐ. Վ. ՔՈՒՇՆԵՐԵԱՆ

Շարունակելի

1. Որպէս զի ամէն տողի չհարկադրիմք ծանօթութիւնք յաւելուլ, կը կանխեմք զրուցել, որ առաջիկայ պատմական յօդուածս բաղել եմք գըլխաւորաբար յիշեալ ազրիւրներէ։

Յիշատակարանք Յգեսսայի հնագէտ ընկերութեան, ի ոռու լեզու. Պատմուրիւն կազարաց աշխարհի Փիլիպ. Երսոն. կաճառորդ գիտութեանց ակադեմեային Ա. Պետրոսուրգի, ՚ի Գաղղ. լեզու. Անտիպ Պատմուրիւն թուղուփոյ Փ. Լագորիոյ. ՚ի Գաղղ. լեզու.

Ազգային ազրիւրք. Ճանապարհորդուրիւն ի Լեհս Վ. Հ. Մինասայ Բժըշկեան, և այլ անտիպ յիշատակարանք։